



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 9**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2017 Թ. ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը:
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
3. Հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչի հաշվետվությունը:
4. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 29 անդամներից նիստին մասնակցում է 24-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

**1-ին հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Բ. Գ. Պ. Գայանե Գևորգյանին: Վերջինս մասնավորապես ասաց հետևյալը.

- 2016-17 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ամփոփիչ ավարտական քննություն է հանձնել առկա ուսուցման բաժնի 83 ուսանող: Արդյունքները հետևյալն են՝ գերազանց՝ 12, լավ՝ 24, բավարար՝ 41, անբավարար՝ 6:

Ավարտական աշխատանք է պաշտպանել 49 ուսանող: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ գերազանց՝ 16, լավ՝ 25, բավարար՝ 7, անբավարար՝ 1:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել են՝

հայ գրականության պատմության ամբիոն – 5 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 3, լավ՝ 2 ուսանողներ.

նորագույն գրականության ամբիոն - 3 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 1, լավ՝ 1, բավարար՝ 1 ուսանողներ.

գրականության տեսության և գրաքննադատության ամբիոն - 3 ուսանող, որոնք ստացել են չափ գնահատական:

2016-2017 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ամփոփիչ ավարտական քննություն է հանձնել առկա ուսուցման բաժնի 55 ուսանող: Արդյունքները հետևյալն են՝ գերազանց՝ 8, լավ՝ 16, բավարար՝ 21, անբավարար՝ 10:

Ավարտական աշխատանք է պաշտպանել 70 ուսանող, որից 49-ը՝ ժամանակակից հայոց լեզվից, 14-ը՝ հայոց լեզվի պատմությունից, 7-ը՝ լեզվաբանությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝

ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 49 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 17, լավ՝ 27, բավարար՝ 5 ուսանողներ.

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 14 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 9, լավ՝ 5 ուսանողներ.

լեզվաբանության ամբիոն՝ 7 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 2, լավ՝ 5 ուսանողներ:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել են 12 ուսանող՝

ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 10 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 7, լավ՝ 3 ուսանողներ.

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 1 ուսանող, որը ստացել է «գերագանց» գնահատական.

ընդհանուր լեզվաբանության ամբիոն՝ 1 ուսանող, որը ստացել է «գերագանց» գնահատական:

Ամփոփիչ քննությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողների մասնագիտական պատրաստականությունը ընդհանուր առմամբ բարձր էր. նրանք ունեին մասնագիտական բավարար գիտելիքներ, աչքի էին ընկնում նյութի բազմակողմանի և խոր իմացությամբ, նրանց խոսքը տրամաբանված էր, դատողությունները՝ համոզիչ: Սակավաթիվ ուսանողների մոտ նկատելի էին մտքերը հստակ ձևակերպելու որոշակի դժվարություններ: Քննական տոմսերում առկա բոլոր հարցերն հստակ ձևակերպված էին, կազմված էին ճիշտ համամասնությամբ: Բացի տեսական հարցերից՝ տոմսերում կար նաև գործնական առաջադրանք, որը հնարավորություն էր տալիս ուսանողներին իրենց տեսական պատասխանը ամրապնդել գործնական առաջադրանքով:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը ևս անցել է գործող քննակարգին համապատասխան: Ավարտական աշխատանքների թեմաները արդիական էին, բազմազան, ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական որոշակի արժեք: Կային նաև զուգադրական բնույթի աշխատանքներ: Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքային ու կատարողական առումով ավարտական աշխատանքները համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Դրանցում հստակ նշված էին նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ուսումնասիրված էր համապատասխան գրականություն, և ներկայացված էին հետազոտության գործնական արդյունքները:

Ուսանողները կարողացան խոսքի տրամաբանական կառուցվածքով, լեզվական իրազեկություններով, թեմայի և աշխատանքի վերաբերյալ հարցերին տրվող պատասխանների և պարզաբանումների, բանավիճելու ու փաստարկներ բերելու կարողություններով արժանանալ համապատասխան գնահատականների: Այնուհանդերձ, կային նաև սակավաթիվ աշխատանքներ, որոնցում մասնակիորեն էր կատարված թեմային առնչվող գրականության վերլուծություն, հիմնավորված չէին սեփական մոտեցումները ուսումնասիրվող

խնդրի վերաբերյալ, թեմաների ձևակերպումները երբեմն շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, քան դրանցում կատարված աշխատանքն էր:

Ընդհանուր առմամբ մագիստրատուրայի շրջանավարտների գիտելիքները ավելի բարձր էին: Նրանք տիրապետում էին մագիստրոսական աշխատանքների նյութին, մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, իսկ որոշ ուսանողներ աչքի ընկան նյութի խոր իմացությամբ՝ զգալիորեն գերազանցելով պահանջվող մակարդակը: Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական աշխատանքների թեմաներն առավելապես արդիական էին, անդրադառնում էին հայագիտության մեջ վիճահարույց խնդիրների. այդ իրողությունն էլ առավել հետաքրքիր դարձրեց մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունը՝ երբեմն վերածելով այն բանավեճի: Աշխատանքների գերակշիռ մասը կառուցված էր նյութի տեսական մասի և գործնական հետազոտությունների համադրմամբ, դրանց մի մասում առկա էին փորձարարական հստակ տվյալներ և այդ տվյալներից ելնելով՝ կատարված էին անհրաժեշտ եզրակացություններ:

Ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակը, մասնագիտական իրազեկությունը, հետազոտական մեթոդների կիրառումը, փաստական նյութը դասակարգելու, վերլուծելու, գնահատելու կարողությունը վկայում են ուսանողների հետ համապատասխան ամբիոնների կատարած հանգամանալից և երկարատև աշխատանքի մասին: Ամբիոնները մեծ ջանք էին գործադրել ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների ընտրության և դրանց իրականացման գործում, քանի որ նկատելի էին գիտական խնդիրների, դրանց լուծումների հստակ շարադրում և կիրառում արդի գիտակարգերում: Հատկապես կարևորում ենք այն փաստը, որ ավարտական և մագիստրոսական աշխատանքները կազմված էին գիտական գրագրության կանոններին համապատասխան: Ընդհանուր առմամբ ցանկանում ենք փաստել, որ համապատասխան ամբիոնների դասախոսները լավագույնս են իրականացրել իրենց պարտականությունները, այն է՝ թեզերի ղեկավարման և գրախոսման աշխատանքները. գրախոսություններում անաչառորեն վեր էին հանված վրիպակներն ու թերությունները, արված էին ուսանելի դիտարկումներ և առաջարկություններ, որոնք օգնում էին հանձնաժողովին աշխատանքը գնահատել ոչ միայն փաստացի թեզի և դրա ներկայացման հիման վրա, այլև գրախոսների կարծիքները նկատի ունենալով:

Հատկապես կարևորում ենք ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի /վարիչ Յ. Ավետիսյան/ կատարած հսկայածավալ աշխատանքը /ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի /մոտ 70/ թեմաները առաջադրված էին այդ ամբիոնի կողմից/: Չնայած աշխատանքների մեծ քանակին՝ ամբիոնի կողմից առաջարկված թեմաներն աչքի էին ընկնում թե՛ արդիականությամբ և՛ թե՛ բազմազանությամբ. առաջադրված էին անգամ հայ լեզվաբանության մեջ չուսումնասիրված թեմաներ, և մագիստրոսներն ու բակալավրիատի ուսանողները հիմնավորված ներկայացնում էին իրենց ուսումնասիրությունները: Հարկ է շեշտել նաև այդ մեծաքանակ աշխատանքների՝ գիտական գրագրությանը համապատասխան ձևակերպված լինելը: Մա փաստում է այն մասին, որ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնը, որի վրա էր դրված ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի պատասխանատվությունը, կատարել է հետևողական և ամենօրյա տքնաջան աշխատանք: Ամբիոնում իրականացվել է մագիստրոսական և ավարտական մոտ 70 աշխատանքների քննարկում, որի արդյունքում ապահովվել է դրանց գիտական պատշաճ մակարդակը:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է այսուհետ ևս ավարտական և մագիստրոսական աշխատանքների համար այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք արդիական են և բխում են հայերենագիտության առկա հիմնախնդիրներից: Թեմաներ առաջադրելիս հարկ է առավել մեծ ուշադրություն դարձնել զուգադրական բնույթի աշխատանքներին՝ կարևորելով ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողություններն ու գործնական հմտությունները դրսևորելու փաստը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպումները երբեմն ընդհանրական բնույթ էին կրում և թեկնածուական կամ դոկտորական աշխատանքների վերնագրեր էին հիշեցնում, երբեմն նկատվում էր ավարտական աշխատանքի վերնագրի և բովանդակության անհամապատասխանություն, կարծում ենք, անհրաժեշտ է ավարտական աշխատանքների թեմաները քննարկել ամբիոնների նիստերում թեմաների հետ կապված թյուրըմբռնումներից խուսափելու համար:

Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման որակին՝ կարևորելով դրանցում փաստական նյութի վերլուծությունը, դասակարգումը և զուգադրումը, փաստարկված դատողությունների ու եզրահանգումների առկայությունը, առկա հիմնախնդիրների լուծ-

ման ասպարեզում ժամանակակից մեթոդաբանության կիրառումը: Հարկ է մեծացնել նախնական խորհրդատվությունների քանակը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար, հստակեցնել աշխատանքի կատարման ընթացքի վերահսկողության մեխանիզմները, մշտադիտարկումների ժամանակ քննարկել ներկայացված թեզի կատարման ծավալը և մակարդակը՝ շեշտադրելով խնդրահարույց հարցերը, մեծացնել դասախոսների պատասխանատվությունը թեզերի հետ կապված աշխատանքների նկատմամբ, կիսամյակային հաշվետվությունների ժամանակ չբավարարվել ուսանողի կողմից ներկայացվող և ղեկավարի կողմից հաստատվող հաշվետվային փաստաթղթով, այլ պահանջել թեզի համապատասխան բաժինների էլեկտրոնային տարբերակները:

Կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես նախորդ, այնպես էլ 2016-17 ուստարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված էր պատշաճ մակարդակով, պահպանված էին ընթացակարգային բոլոր պահանջները: Հատկապես ցանկանում ենք բարձր գնահատել բանասիրական ֆակուլտետի ղեկան Ա. Ավագյանի կատարած մեծ աշխատանքը, որի արդյունքում պետական քննական հանձնաժողովի աշխատանքները ընթացել են ղեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան, քննական կարգի խախտումներ չեն եղել, և ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովն աշխատել է գործնական և փոխադարձ վստահության մթնոլորտում:

Բակալավրի ծրագրի՝ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ մ. գ. դ., պրոֆ. Հայկ Պետրոսյանի հաշվետվության մեջ ընդգծվեց, որ դրվատանքի է արժանի մանկավարժության ամբիոնի կատարած հսկայածավալ, հետևողական աշխատանքը կրթական ծրագրի իրականացման, հետազոտության թեմաների ընտրության, ուսանողների ուսումնական հետազոտությունների կազմակերպման, ուսանողներին հետազոտական աշխատանքի և ավարտական աշխատանքի պաշտպանության նախապատրաստման, կազմակերպման, կոմպետենտ ղեկավարների ընտրության ուղղությամբ:

Նկատվեց, որ շրջանավարտների թիվը 37-ն էր.

«20» միավոր 17 քննությունից, 7 ավարտ. աշխ. պաշտպ.

«19» միավոր 4 քննությունից, 5 ավարտ. աշխ. պաշտպ.

«18» միավոր 3 քննությունից, 10 ավարտ. աշխ. պաշտպ.

«17» միավոր 3 քննությունից, 7 ավարտ. աշխ. պաշտպ.

«16» միավոր 1 քննությունից, 4 ավարտ. աշխ. պաշտպ.

«15» միավոր 2 քննությունից, 4 ավարտ. աշխ. պաշտպ.

«12» միավոր 3 քննությունից, - ավարտ. աշխ. պաշտպ.

«10» միավոր 1 քննությունից, - ավարտ. աշխ. պաշտպ.

«8» միավոր 3 քննությունից, - ավարտ. աշխ. պաշտպ.

Մագիստրոսի կրթական ծրագրի՝ «Կրթության կազմակերպում» մասնագիտությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գնահատականները հետևյալն են՝

«20» միավոր - 4

«19» միավոր - 1

«17» միավոր - 2

Հանձնաժողովի նախագահի այն նկատառմանը, թե պետք է վերանայել ավարտական աշխատանքների կառուցվածքին ներկայացվող պահանջները, այն է՝ դրանցից հանել նորույթին, տեսական և գործնական նշանակություններին առնչվող կետերը, պրոֆ. Ն. Հարությունյանը պատասխանեց, որ դրանք ԵՊՀ-ի գիտխորհրդի որոշումներն են, որոնք վերանայման ենթակա չեն:

**Օրակարգի 2-րդ** հարցը նվիրված էր առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորմանը:

**ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Սաթենիկ Հարությունի Կարապետյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ ամբիոնի 2015թ. առկա ուսուցմամբ ասպիրանտ Սաթենիկ Կարապետյանը (թեմա՝ «Երգիծանքը արևմտահայ փոքր արձակուրդ», գիտական ղեկավար՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Ալ.

Մակարյան) կատարել է զգալի աշխատանք թեմային առնչվող նյութերի ուսումնասիրման ուղղությամբ:

2016-2017 թթ. ուսումնական տարում հանձնել է հետևյալ ստուգարքները՝

Մասնագիտական պատրաստվածության կրթամաս

➤ Հայ երգիծաբանություն

➤ Հայ նորավեպը

Ընտրովի դասընթացներ

➤ Առանձարի երգիծանքը

Վերոնշյալ ուսումնական տարվա ընթացքում անցել է մանկավարժական պրակտիկա՝ նշանակվելով 3-րդ կուրսի ուսանողների մի խմբի արտադրական (մանկավարժական) պրակտիկայի մեթոդիստ (Խ. Աբովյանի անվան N 2 դպրոց, 03.04. 2017-03.05.2017):

Նշված ժամանակաշրջանում տպագրել է 2 հոդված.

- *Առանձարի երգիծանքը. արևմտահայ գրական կյանքը պատկերող նորավեպեր*, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, «Հայագիտական հանդես», N4 (34), Եր., 2016, էջ 72-82:
- *Արևմտահայ իրականությունը Առանձարի երգիծական նորավեպերում*, «Բանբեր Երևանի համալսարանի», N1 (22), Եր., 2017, էջ 3-17:

Ատենախոսության վերաբերյալ ուսումնասիրել և մշակել է անհրաժեշտ տեսական գրականությունը, ինչպես նաև սկսել է աշխատանքի շարադրման փուլը: Կատարված աշխատանքը հոդվածներ պատրաստելու հիմք է տվել:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**– Ատեստավորել **Սաթենիկ Հարությունի Կարապետյանին:**

**ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի **Սոսե Փարթուղի Բողոզյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**– Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Սաֆարյանը, Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ ամբիոնի 2015թ. առկա ուսուցմամբ ասպիրանտ Սոսե Բողոզյանը (թեմա՝ «Նոր Զուղայի գրական-մշակութային կյանքը 17-18-րդ դարերում, գիտական դեկա-



վար՝ ք. գ. դ., պրոֆ. Վազգեն Հմայակի Մաֆարյան) կատարել է զգալի աշխատանք թեմային առնչվող նյութերի ուսումնասիրման շուրջ:

Ատենախոսության համար անհրաժեշտ նյութերը հավաքված են, և ճշտված է աշխատանքի կառույցը: Հաշվի առնելով ուսումնասիրվող թեմայի մեծ ընդգրկունությունը և հավաքված բանասիրական նյութերի բազմազանությունն ու տարածականությունը՝ մատենագրություն, գրչագրեր, արխիվային փաստաթղթեր, մամուլ և այլն, աշխատանքը բաժանել է հետևյալ երեք գլուխների.

ա. Առաջին գլխում պատկերում է 17-18-րդ դարերի Նոր Ջուղայի պատմական, ազգային-հասարակական, մշակութային միջավայրը և քննում գրական կյանքի գոյության հարցը՝ դիտարկելով այդ միջավայրը պայմանավորող ազդակների առկայության թե բացակայության փաստերը:

բ. Երկրորդ գլխում ներկայացնում է Նոր Ջուղայի 17-18-րդ դարերի գրականության բովանդակային, ժանրային ընդգրկումը: Այստեղ են ներկայացվելու ժամանակի գրականության թեմաները, տարածված ժանրերը և աչքի ընկնող հեղինակները:

գ. Երրորդ գլուխը հատկացվում է դարաշրջանի Նոր Ջուղայի տաղերգության ուսումնասիրությանը. հիշատակվում են հայտնի աշուղներն ու բանաստեղծները, դիտարկվում են առնչությունները միջնադարյան տաղերգության հետ՝ հետևելով խայտաբղետ բանաստեղծության զարգացմանը հայերեն, պարսկերեն, թուրքերեն ընդմիջարկումներում:

2016 թվականի նոյեմբերին հանձնել է ինֆորմատիկայի մինիմում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** - Ատեստավորել **Սոսե Փարթուղի Բողոզյանին:**

**ԼՍԵՑԻՆ** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ **Թագուհի Գեղամի Մանուկյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Լ. Թեյլանը, Բ. Ներսիսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Թագուհի Մանուկյանը 2016 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում)՝ «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Ֆեոդոր Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վեպի թարգմանությունը (թարգմանիչ՝ Կ. Սուրենյան)», ղեկավար՝ պրոֆ. Ռուբեն Մաքապետոյան:

Թագուհի Մանուկյանը 2016-2017 ուստարում մասնակցել է գիտության փիլիսոփայություն, մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն), տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ, մանկավարժություն և հոգեբանություն պարտադիր, գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում ընտրովի դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ծանոթացել է տեսական գրականությանը և շարադրում է դարձվածային միավորների թարգմանությանը վերաբերող հոդվածը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ատեստավորել հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Թագուհի Մանուկյանին**:

**ԼՍԵՑԻՆ** - հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի առկա ասպիրանտ **Թամարա Պողոսյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Բ. Գ. Թ., դոց. Ն. Դիլբարյանը: Ատենախոսության թեման է՝ «17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննություն», ղեկավարը՝ Բ. Գ. Թ., դոց. Ն. Պողոսյանը: 2016-2017 թթ. ուսումնական տարում հանձնել է ստուգարք «17-րդ դարի հայ տպագրությունը և աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվական համակարգի առանձնահատկությունները» դասընթացից: Հանձնել է թեկնածուական որակավորման քննություն ատենախոսության վերաբերյալ, նաև թեկնածուական որակավորման քննություն մասնագիտությունից:

2016-2017թթ. ուսումնական տարվա ընթացքում լույս են տեսել ատենախոսության վերաբերյալ հինգ հոդվածներ:

Ատենախոսության շարադրանքը հասցրել է ավարտին՝ հանձնելով գիտական ղեկավարին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով **Թամարա Պողոսյանի** կատարած աշխատանքը մեկ տարվա ընթացքում՝ ատեստավորել նրան:

**ԼՍԵՑԻՆ** - Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի երկրորդ տարվա առկա ասպիրանտ **Գրիգոր Շաշիկյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Գրիգոր Շաշիկյանը 2016-2017թթ. ուսումնական տարում ուսումնասիրել է տեսական և գեղարվեստական տարաբնույթ գրականություն, որոնք անմիջական առնչություն ունեն ատենախաասության թեմային: Մասնակցել է ընտրովի մի շարք դասընթացների, որոնք նպատակ ունեն բարելավելու ասպիրանտի ատենախոսության որակը: «Միջտեքստայնությունն իբրև պատումի կերտման միջոց Հրանտ Մաթևոսյանի «Խումհար» վիպակում» վերնագրով հոդվածը տպագրվել է «Կանթեդ» գիտական հոդվածների ժողովածուում՝ 2017 թվականի առաջին համարում: «Հայեցակետի կենտրոնացման եղանակները Հրանտ Մաթևոսյանի «Խումհար» վիպակում» վերնագրով հոդվածը տպագրել է «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» գիտական հանդեսի 2017 թվականի առաջին համարում: Տպագրման է ներկայացրել ևս մեկ հոդված՝ «Ժամանակի պատկերումը Հրանտ Մաթևոսյանի «Մեծամոր» էսսեում» վերնագրով: Զուգահեռ անցել է նաև մանկավարժական պրակտիկա՝ (48 ժամ գրականության տեսության և քննադատության ամբիոնում):

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Հաստատել **Գրիգոր Շաշիկյանի** կատարած աշխատանքը և ատեստավորել նրան:

**ԼՍԵՑԻՆ** - Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի երրորդ տարվա առկա ասպիրանտ **Դիանա Մնացականյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Դիանա Մնացականյանը 2016-2017թթ. ուսումնական տարում ուսումնասիրել է տարաբնույթ տեսական և գեղարվեստական գրականություն, որոնք անմիջական առնչություն ունեն ատենախաասության թեմային: Հանձնել է որակավորման երկու քննություն մասնագիտությունից և ստացել «գերազանց» գնահատականներ: Մասնակցել է ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի ՈԻԳԸ կազմակերպած աշնանային գիտական նստաշրջանին՝ ներկայացնելով զեկուցում, որի ընդլայնված տարբերակը տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» գիտական հանդեսի 2016 թվականի 3-րդ համարում: Երկու հոդված տպագրվել է «Բանբեր Երևանի Վ. Բյուրսովի անվան պետական

լեզվագիտական համալսարանի» պարբերականի 2016թ. և 2017թ. առաջին համարներում: Տպագրման է հանձնվել նաև մեկ հոդված, որը շուտով լույս կտեսնի «Հայագիտական հանդես» ամսագրի առաջիկա համարում: Ձուգահեռ անցել է նաև մանկավարժական պրակտիկա՝ (40 ժամ գրականության տեսության և քննադատության ամբիոնում):

**ՈՐՈՇԵՑԻՆ-** Հաստատել **Դիանա Մնացականյանի** կատարած աշխատանքը և ատեստավորել նրան:

**Օրակարգի 3-րդ** հարցի՝ նորագույն գրականության ամբիոնի տարեկան հաշվետվության առիթով ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ Բ. Գ. Թ., դոց. Սեյրան Գրիգորյանը:

### **ՄԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ.**

- Հայ նորագույն գրականության ամբիոնում աշխատում են ինը դասախոսներ, այդ թվում մեկը՝ ներքին, երկուսը՝ արտաքին համատեղությամբ և մեկը՝ որպես հրավիրյալ դասախոս: Ամբիոնի աշխատակիցներից երեքը պրոֆեսորներ են, չորսը՝ դոցենտներ և երկուսը՝ ասիստենտներ: Ուսանողների թվի նվազման պատճառով ամբիոնի աշխատակիցների մեծ մասը աշխատում է ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ, գերակշիռ մասը՝ 0,5-0,75 դրույքով:

Հաշվետու տարվա ընթացքում մեր մասնագետները հիմնական և մասնագիտական դասընթացներ են վարել բակալավրիատում և մագիստրատուրայում, զբաղվել գիտական և հասարակական աշխատանքներով:

Լույս է տեսել պրոֆ. Կ. Աղաբեկյանի «Հոդվածներ» ժողովածուն: Վերահրատարակվել է պրոֆ. Վազգեն Գաբրիելյանի «Սփյուռքահայ գրականություն» բուհական դասագիրքը:

2016 թ. մայիսի 12-ին կայացել է «Մաթևոսյանական ընթերցումներ» երրորդ գիտական նստաշրջանը, որի ընթացքում զեկուցումներով հանդես են եկել ամբիոնի անդամներ Վ. Գաբրիելյանը («Բանաստեղծականը Հր. Մաթևոսյանի արձակում»), Ս. Գրիգորյանը («Թուրքի կերպարը Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության մեջ»), Ա. Արզումանյանը («Ստ. Ջորջան և Հր. Մաթևոսյան»), Վ. Դանիելյանը («Արջի մետաֆորը՝ ըստ Մաթևոսյանի, Բակունցի և Տոլկիների») և Ս. Ղազարյանը («Հրանտ Մաթևոսյան և Վասիլի Բելով»): Գիտաժողովին մասնակցել են նաև ԵՊՀ և հանրապետության մի շարք գիտնականներ: Նստաշրջանի նյութերի հիման վրա պրոֆ. Վ. Գաբրիելյանի խմբագրությամբ կազմվել է «Մա-

թևայանական ընթերցումներ» հոդվածների երրորդ ժողովածուն, որը տպագրել է ԵՊՀ հրատարակչությունը:

Այս տարվա ապրիլի 27-ին ամբիոնը Հայաստանի գրողների միության և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ կազմակերպել և անցկացրել է «Չարենցյան ընթերցումներ» հանրապետական տասներորդ գիտական նստաշրջանը՝ նվիրված ամբիոնի նախկին վարիչ Վազգեն Գաբրիելյանի ծննդյան 80-ամյակին: Ի թիվս ԵՊՀ և հանրապետության այլ մասնագետների՝ զեկուցումներով հանդես են եկել ամբիոնի աշխատակիցներ Վ. Գաբրիելյանը, Ս. Գրիգորյանը, Վ. Ղանիելյանը և Լ. Սեյրանյանը: Պատրաստվում է և առաջիկայում դարձյալ առանձին գրքով կտպագրվի այդ գիտաժողովի նյութերի ժողովածուն:

Դոցենտ Ս. Գրիգորյանը 2016 թ. դեկտեմբերի 15-ին «Եղիշե Չարենց և Ավետիս Ահարոնյան» թեմայով զեկուցում է կարդացել Համազգային հայ կրթական և մշակութային միության, Երևանի պետական համալսարանի և ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած «Ավետիս Ահարոնյան» միջազգային գիտաժողովում: Զեկուցման ընդարձակ տարբերակը զետեղվել է վերջերս լույս տեսած ժողովածուի մեջ:

Ամբիոնի լաբորանտ Մ. Ղազարյանը այս տարվա ապրիլին Միջիգանի համալսարանի հրավերով մասնակցել է միջազգային սեմինարի՝ հանդես գալով «Գենդերի սոցիալական հոգեբանության դրսևորումը Հակոբ Օշականի պատմվածքներում» թեմայով:

Ամբիոնի անդամները 2016-17 թթ. մամուլում, ժողովածուներում և համացանցի կայքերում հրապարակել են գիտական և ուսումնամեթոդական տարբեր հոդվածներ՝ նվիրված հայ նորագույն գրականության և գրականության դասավանդման մեթոդիկայի այլազան խնդիրներին: Ամբիոնի դասախոսները ակնարկային դասախոսություններ են կարդացել տարբեր մարզերի դպրոցներում, ունեցել հեռուստաելույթներ:

Աշխատանք է կատարվում դասավանդման ձևերի ու մեթոդների արդիականացման ուղղությամբ: Անցյալ ուսումնական տարվա վերջին համալսարանի կայքում տեղադրվել է ամբիոնի դոցենտ Ս. Գրիգորյանի «Համո Սահյան» դասախոսության էլեկտրոնային տարբերակը: Իբրև երևույթ՝ սա առաջինն է Երևանի պետական համալսարանի պատմության մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է աշխատանքը գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ: Ամբիոնն ունի հեռակա ուսուցման երկու ասպիրանտ, որոնց ատենախոսությունները նվիրված են լիբանանահայ արձակագիր Միմոն Միմոնյանի կյանքին ու ստեղծագործությանը և Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի ստեղծագործական պատմությանը:

Քայլեր են կատարվում նաև սահուն սերնդափոխության և բարոյահոգեբանական մթնոլորտը առողջ պահելու համար: Մասնավորապես ամբիոնը նախաձեռնել է տարիքի և առողջական դրդապատճառներով վաստակած հանգստի անցնող ավագ գործընկերներին հատուկ հանդիսությամբ ճանապարհելու բարի ավանդույթ: 2016 թ. հոկտեմբերին տեղի է ունեցել նման առաջին միջոցառումը՝ հայ նորագույն ամբիոնի երկարամյա դասախոս պրոֆ. Լարիսա Մնացականյանի մեծարմանը նվիրված ցերեկույթը, որին ներկա են եղել նրա գործընկերները և ուսանողները:

Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփումը **օրակարգի 4-րդ** հարցն էր: Մանկավարժության ամբիոնի վարիչ պրոֆ. Ն. Հարությունյանը մասնավորապես նկատեց, որ 2016-17 ուստարում հայ բանասիրության ֆակուլտետի 3-րդ կուրսի հեռակա և առկա ուսուցմամբ թվով 115 ուսանողներ մանկավարժական պրակտիկա են անցկացրել Երևանի 12 դպրոցներում ապրիլի 3-ից մինչև մայիսի 2-ը ներառյալ: Պրակտիկան ընդհանուր առմամբ եղել է գոհացուցիչ. կազմակերպվել են բաց դասեր, վիկտորինաներ, միջոցառումներ՝ նվիրված Ջատկի տոնին, Մեծ եղեռնին գոհ գնացած արևմտահայ բանաստեղծների հիշատակին, միջդասարանական մրցույթներ, ստեղծվել է պաստառ՝ «Իմ պրակտիկանտ ուսուցիչը» խորագրով: Պրակտիկայի ընթացքը քննարկվել և արդյունքներն ամփոփվել են համապատասխան ամբիոնների նիստերում:

#### **Ընթացիկ հարցերում քննարկվեցին.**

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – ք. գ. թ., դոցենտ **Բելլա Սուրենի Խոջումյանի** «Ռուսաց լեզվի սովորական դարձվածների ուսումնասիրության լեզվամշակութաբանական և կառուցվածքամաստաբանական հայեցակերպերը՝ համեմատությամբ հայոց լեզվի» դոկտորական ատենախոսության թեմայի հաստատումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը և ուրիշներ:

Նշվեց, որ ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ խնդիր է դրվում՝ 1) ուսումնասիրել դարձվածքների ամենախոշոր թեմատիկ խմբին՝ սոմատիկ դարձվածքներին պատկանող միավորների լեզվամշակութային և կառուցվածքախմաստային առանձնահատկությունները, նրանց կապը ժեստերի լեզվի ու ազգային մշակույթի հետ, ինչը նոր մակարդակի կրթարձրացնի առանձին թեմատիկ խմբերի դարձվածքների ուսումնասիրությունը և կնպաստի միջմշակութային հաղորդակցման զարգացմանը, 2) առաջին անգամ կատարել ռուսերենի սոմատիկ դարձվածքների ուսումնասիրություն հայերենի զուգադրությամբ, 3) ներկայացնել ռուս-հայերեն սոմատիկ դարձվածքների բառարան կազմելու սկզբունքները սեփական մշակմամբ:

Հեղինակը հրատարակել է ատենախոսության թեմային վերաբերող 39 աշխատանք, այդ թվում՝ 1 (մեկ) բառարան և 9 (ինը) հրապարակում արտասահմանյան գիտական հանդեսներում:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - «Ռուսաց լեզվի սոմատիկ դարձվածքների ուսումնասիրության լեզվամշակութաբանական և կառուցվածքախմաստաբանական հայեցակերպերը՝ համեմատությամբ հայոց լեզվի» թեման հաստատել որպես բ. գ. թ., դոց. Բելլա Սուրենի Խոջունյանի դոկտորական ատենախոսության թեմա:

բ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ Մարինե Ղազարյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ս. Մուրադյանը, բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանը:

Ատենախոսության թեմա առաջարկվեց «Հոգևորի և բնագոյայինի միասնության խնդիրը Հակոբ Օշականի փոքր արձակում»՝ Ժ. 01. 02- «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- 1. Հաստատել Մարինե Ղազարյանի ատենախոսության թեման՝ «Հոգևորի և բնագոյայինի միասնության խնդիրը Հակոբ Օշականի փոքր արձակում»՝ Ժ. 01. 02- «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար՝ բան. գիտ. դոկտ., պրոֆ. Վազգեն Գաբրիելյանին:

զ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ Ծովինար Ռաֆիկի Հարությունյանի «Դեղատոմս» (եռալեզու օժանդակ տերմինաբանական ձեռնարկ սկսնակ դեղագետների համար) աշխատության մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը և ուրիշներ:

Նշվեց, որ ձեռնարկը ներառում է լատիներենի այն բոլոր կարևոր տարրերը, որոնք անհրաժեշտ են դեղատոմս գրելու և դեղատոմսի կառուցվածքի ընդհանուր բնութագիրը, դեղատոմսում հանդիպող կարևոր կրճատումները, անհրաժեշտ դեղանյութերի անվանումները, առավել հաճախադեպ քերականական երևույթները և կայուն արտահայտությունները կարդալ-հասկանալու համար: Ընդ որում՝ մեթոդաբանական տեսանկյունից շատ արժեքավոր ենք համարում այն, որ դեղանյութերի մեծ մասի դեպքում ոչ միայն թարգմանաբար տրվում են դրանց անվանումների հայերեն և ռուսերեն համարժեքները, այլև այդ դեղանյութերի բացատրական բնութագիրը:

Ծ. Հարությունյանի սույն աշխատանքը իր տեսակի մեջ շատ արժեքավոր և պահանջված գործ է, և այն անհրաժեշտաբար պետք է ներառել համապատասխան դասընթացի մեջ՝ որպես օժանդակ ուսումնամեթոդական ձեռնարկ:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Ծ. Հարությունյանի «Դեղատոմս» (եռալեզու օժանդակ տերմինաբանական ձեռնարկ սկսնակ դեղագետների համար) ուսումնամեթոդական ձեռնարկը կարևոր ներդրում է լատիներենի ուսուցման բնագավառում և արժանի է տպագրության:

դ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – «Ուղեցույց հայոց լեզվի հնչյունաբանության, բառագիտության, քերականության» աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը: Հեղինակներն են՝ Յու. Ավետիսյան, Լ. Թեյան, Լ. Ավետիսյան, Լ. Սարգսյան:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Լ. Հովսեփյանը, դոց. դոց. Բ. Ներսիսյանը և Լ. Թեյանը:

Նշվեց, որ ուղեցույցն ընդգրկում է արդի գրական հայերենի գրեթե բոլոր ոլորտներին վերաբերող գործնական նյութեր, բառացանկեր: Աշխատանքում քննվում են արդի գրական հայերենում կատարվող տեղաշարժերը, կենդանի խոսքում նկատվող անճշտություններն



ու ոչ գրական ձևերը: Լեզվական իրողությունների ամփոփ բացատրությունները, որոշ նմուշներն ու օրինակները միտված են ուղեցույցից օգտվելը առավել դյուրին դարձնելուն: Ուղեցույցում լեզվական շատ իրողություններ քննվում են նոր տեսանկյունից, առաջարկվում են դրանց վերաբերմամբ նոր մոտեցումներ և գործածության նոր հնարավորություններ: Գիրքը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր գործածում են գրական հայերենը:

Գրքի գրախոս՝ բ. գ. թ., դոց. Մ. Ֆելեքյան:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ «Ուղեցույց հայոց լեզվի հնչյունաբանության, բառագիտության, քերականության» գիրքը երաշխավորել տպագրության:

Ե/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Օ. Ն. Տուրիշևայի «Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը» ուսումնական ձեռնարկի հայերեն թարգմանության տպագրության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - պրոֆ., պրոֆ. Ժ. Քալանթարյանը, Վ. Գաբրիելյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ ձեռնարկի տպագրությունն անհրաժեշտ է հայ ուսանողներին 19-20-րդ դդ. համաշխարհային գրականագիտության ուղղություններին, մեթոդներին և վերլուծական սկզբունքներին ծանոթացնելու համար: Գիրքը կարող է ծառայել ոչ միայն իբրև ուսումնական ձեռնարկ, այլև մեթոդաբանական ուղեցույց գրականագիտությամբ զբաղվող մասնագետների համար: Գիրքը թարգմանել է դոց. Ա. Ջրբաշյանը, խմբագրել՝ Ժ. Քալանթարյանը: Գրքին կցված է առաջաբան թարգմանչի կողմից, կան թարգմանչի ծանոթագրություններ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Օ. Ն. Տուրիշևայի «Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը» ուսումնական ձեռնարկի հայերեն թարգմանությունը երաշխավորել տպագրության:

Վերջում պրոֆ. Ա. Ավագյանը, ամփոփելով գիտական խորհրդի նիստը, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**